«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԶՊ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿԻՑ՝ Փ/Գ-Տ Գ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Փ/Գ-Տ Ա.ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԹԵՄԱ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն ----------2
Երթակարգ ----------4
Մարտակարգ ----------5
Տեղանքը և նրա նշանակությունը մարտում ----------7
Ինժեներական արգելքների կառուցվածքը ----------8
Տակտիկական քողարկում ----------8
Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը պաշտպանությունում ----------9
Կրակային հզորություն ----------10
Զինվորի գործողությունները մարտի ժամանակ ----------11
Խուսանավում և շրջանցում ----------12
Հարձակում ----------13
Հարձակում քաղաքում ----------14
Հանդիպակած մարտ ----------15
Հարձակում լեռներում ----------16
Եզրակացություն,առաջարկություն----------18
Գրականություն ----------19

Ներածություն

ՆԶՊ առարկայի (և ոչ միայն) դասավանդումը դինամիկ և մշտական զարգացող հարափոփոխ ուսումնասիրության գործընթաց է: Այն պատասխանատու է անհատի՝ աշակերտի ուսուցման, զարգացման և դաստիարակության համար, քանի որ յուրաքանչյուր անհատ հասակակության մի մասնիկն է, պետության և ազգի անցյալը արժեվորողը, ներկայի կրողը, ապագան կերտողը: Այդ իսկ պատճառով հանրակրթությունը պիտի մշտապես գտնվի պետության հոգածության կենտրոնում և պատկան մարմինների կողմից ընդունված օրենքներն և ենթաօրենսդրական ակտերն և որոշումները ոչ թե պետք է կրեն կարճաժամկետ բնույթ այլ ներկայացնեն հեռահար ժամկետների ռազմավարություն: Ընդունված նոր չափորոշիչները և կատարված փոփոխությունները, որտեղ ակնկալվում են ուսուցիչների դերի բարձրացումը և աշակերտներից ակնկալվող կարողությունները և կարողությունները կնպաստեն կրթության որակի բարձրացմանը և պետական ամրապնդմանը: Դասարանը մի վայր է որտեղ առարկան դասավանդող ուսուցիչը պետք է ներառի այնպիսի մեթոդներ որոնք կխթանեն աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավոտ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Այսօրվա աշակերտին չեն կարող բավարարել միայն տվյալ առարկայի հետ կապված ամենահետաքրքիր տեղեկությունն ու գիտելիքը, առկա տեղեկատվական տեխնոլոգիաները, բազմաբնույթ տեղեկությունը ստիպում է ուսուցչին յուրաքանչյուր թեմա քննարկել բազմակողմանի, ուսումնասիրել պատմական իրադարցությունները, անհատների գործունեությունը տարբեր ոլորտներում և իրավիճակներում, սովորել նախկինում թույլ տված սխալներից և բացթողումներից ու այդ ամենը կիրառել կյանքում, հատկապես դասավարման գործընթացում:

Հանրակրթական դպրոցին ներկայացվող պահանջներին համապատասխան այսօր անհրաժեշտություն է առաջացել կապերի բացահայտումն (միջառարկայական կապ), դերն ու նշանակությունը, որը համաչափ կիրառելու դեպքում աշակերտների մոտ կբերի գիտելիքների հարստացմանն ու կընդլայնեն գիտելիքների շրջանակն ու

աշխարհահայացքը: Այս ամենին կարելի է հասնել միջառարկայական և ներառարկայական կապերի օգնությամբ, աշակերտակենտրոն դասապրոցեսներով, որը աշակերտին կտա նոր հմտություններ, ճանաչողական ակտիվություն, քննադատական մտածողություն, պատճառահետևանքային կապերի մեկնաբանություն,տրամաբանական մտածողություն և եզրահանգումներ անելու ունակություններ: Կհասկանա առարկայի անհրաժեշտությունն ու կարևորությունը և ամենակարևորը սովորածը կիրառել կյանքում: Այս ամենի հետ մեկտեղ չպետք է անտեսել միջառարկայական կապերով ուղղորդված ուսուցչի տրամաբանական կարողությունները, որը անմիջական ազդեցութոյուն է թողնում դասապրոցեսի վրա: Դրական ազդեցությունը կարողանում է աշակերտներին համախմբել ուսուցչի շուրջ և մեծացնում հետաքրքրությունը առարկայի նկատմամբ հասցնելով այն անհրաժեշտ վերջնարդյունքների: Ժամանակակից համազորային մարտ, բնութագիրը, տեսակները Մոտոհրաձգային ջոկի երթակարգը և մարտակարգը:

Նպատակը

ՆԶՊ առարկայի ընդհանուր մարտավարության ենթաբաժնի նպատակն է զինվորական պատրաստության հիմունքներից նվազագույն գիտելիքների տիրապետող, արդիական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով արտակարգ իրավիճակներում կենսաապահովում իրականացնող, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ անձի ձևավորումը: Հասարակական գիտակցության, բարոյական արժեհամակարգի պատասխանատվություն, հաստատակամություն, ընկերասիրություն,փոխօ գնություն, հանդուրժողականություն և վարքային նորմերին համապատասխան վարքագծի ձևավորումը: Հիմնական նպատակներից է հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ համապատասխան վարքագիծ դրսեվորելու համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձեռքբերումն ու զարգացումը, գիտելիքների յուրացումը:

Համազորային մարտը, որին մասնակցում են բոլոր զորատեսակների ստորաբաժանումները, զորամասերն ու միավորումները, հատուկ զորքերը՝ փոխգործակցելով ռազմաօդային ուժերի զորամասերի հետ կոչվում են **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ՄԱՐՏ:**

ՄԱՐՏԸ պատերազմող կողմերի ստորաբաժանումների, զորամասերի զինված ընդարումն է: Այն հաղթանակի հասնելու համար միակ միջոցն է և մղվում է հակառակորդին ոչնչացնելու, գերելու, ինչպես նաև մարտական կարևոր օբյեկտները (բնագծերը) գրավելու և պահելու նպատակով: Ժամանակակից համազորային մարտը պահանջում է մարտական բարձր գիտելիքներ, ֆիզիկական կոպվածություն, զինտեխնիկայի և սպառազինության ամբողջ հզորության տիրապետում, քողարկման արվեստի տիրապետում, ինժեներական աշխատանքների (ականապատում, ականազերծում, արգելափակոցների տեղադրում, ապամոնտաժում, անցում, գետանում, թակստոցների և հրամյատարական կետերի կառուցում, խրամատների ճիշտ կահավորում) մանրակրկիտ իրականացում: Մարտերը կարող են վարվել գիշերային և ցերեկային ժամի, տարբեր եղանակային տեսանելիության պայմաններում, որի ընթացքում անհրաժեշտ է պլանավորել և ապահովել այնպիսի պայմաններ որը կբերի սեփական զորքերի հաղթանակին և թշնամու լիակատար ջախջախմանը: Մարտի վարման ժամանակ շատ կարևոր դեր է կատարում ջոկերի, դասակների, վաշտերի, գումարտակների, զորամասերի, միավորումների ինչպես նաև այլ զորատեսակների հետ փոխհամագործակցությունը և ջանքերի ներդրումը խնդրի,սահմանագծերի և ժամանակի առումով:

Ելնելով վարվող մարտի եղանակից և հակառակորդ կողմերի զորքերի գործողության բնույթից տարբերվում են մարտի հետևյալ տեսակները՝ պաշտպանություն և արձակում:

Երթակարգ

Ստորաբաժանումների զորաշարվածքն է հետիոտն կամ տեխնիկայի միջոցով: Երթակարգը պետք է ապահովի.

-շարժման բարձր արագություն,

-արագ ծավալում մարտակարգի,

-հակառակորդի կողմից նվազագույն խոցելիություն ,

-ստորաբաժանման կայուն կառավարում:

Մարտակարգ Ստորաբաժանումների զորաշարվածքնե է մարտ վարելու համար,որը պետք է համապատասխանի և ապահովի.

-խնդրի իրականացմանը,

-կայացող մարտի մտահղացմանը,

-մարտի հաջողակ վարմանը ինչպես սովորական զինատեսակներով,այնպես էլ խոցման այլ միջոցների կիրառման պայմաններում,

-մարտական հնարավորությունների ամբողջական կիրառում

-ընտրված կամ նախատեսված տեղանքում ժամանակին ջանքերի ներդրում,

-պաշտպանությունում կայունություն և ակտիվություն,

-հակառակորդի կողմից անձնակազմի և զինտեխնիկայի խոցելության նվազեցում,

-թշնամու խոցելիության կամայականություն իր իսկ տարածքում հնարավորինս շատ խորությամբ,

-ապահովել անընդմեջ փոխհամագործակցություն և ստորաբաժանումների կառավարում:

Մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումների գրոհից առաջ իրականացվում է գրոհի կրակային պատրաստություն,իսկ հարձակման ընդացքում՝ կրակային աջակցություն և հարձակվող ուժերի կրակային ուղեկցում: Այսպիսով մարտակարգն ապահովում է՝

-խնդրի հաջող կատարումը,

-հակառակորդի կրակից կորստի նվազեցումը,

-կրակի ղեկավարումը ձայնով,կապի միջոցով կամ ազդանշանով,

-զինվորների միջև փոխգործակցության ապահովումը:

Մարտակարգ

Ստորաբաժանումների զորաշարվածքն է մարտ վարելու համար,որը պետք է համապատասխանի և ապահովի.

-խնդրի իրականացմանը,

-կայացող մարտի մտահղացմանը,

-մարտի հաջողակ վարմանը ինչպես սովորական զինատեսակներով,այնպես էլ խոցման այլ միջոցների կիրառման պայմաններում,

-մարտական հնարավորությունների ամբողջական կիրառում,

-ընտրված կամ նախատեսված տեղանքում ժամանակին ջանքերի ներդրում,

-պաշտպանությունում կայունություն և ակտիվություն,

-հակառակորդի կողմից անձնակազմի և զինտեխնիկայի խոցելության նվազեցում,

-թշնամու խոցելիության կամայականություն իր իսկ տարածքում հնարավորինս շատ խորությամբ,

-ապահովել անընդմեջ փոխհամագործակցություն և ստորաբաժանումների կառավարում:

Մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումների գրոհից առաջ իրականացվում է գրոհի կրակային պատրաստություն,իսկ հարձակման ընդացքում՝ կրակային աջակցություն և հարձակվող ուժերի կրակային ուղեկցում: Այսպիսով մարտակարգն ապահովում է ՝

-խնդրի հաջող կատարումը

-հակառակորդի կրակից կորստի նվազեցումը,

-կրակի ղեկավարումը ձայնով, կապի միջոցով կամ ազդանշանով,

-զինվորների միջև փոխգործակցության ապահովումը:



Ջոկի ծավալումը երթակարգից մարտակարգի



Ջոկի մարտակարգը հարձակման ժամանակ

Տեղանքը և նրա նշանակությունը մարտում

Մինչև հետագա մարտական գործողություններին անցնելը անհրաժեշտ է ուսումնասիրել տեղանքը: Տեղանքը երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է,որի վրա անցկացվել են մարտական գործողություններ: Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է տեղանքի ռելիեֆ: Տեղանքն ըստ ռելիեֆի բնույթի լինում է հարթավայրային, բլրային և լեռնային: Նրա վրա տեղաբաշխված բոլոր առարկաները,որոնք ստեղծված են մարդու կամ բնության կողմից կոչվում են տեղանքի առարկաներ Տեղանքի մարտական հատկությունները և նրա հիմնական տարատեսակները Տեղանքի այն հատկությունները որոնք ազդում են մարտական գործողությունների կատարմանը, զենքի և մարտական տեխնիկայի օգտագործմանը կոչվում են տեղանքի մարտավարական հատկություններ: Դրանք են՝

-տեղանքի անցանելիությունը,

-տեղանքի պաշտպանական հատկությունները,

-տեղանքի քողարկման հատկությունները,

-տեղանքի կողմնորոշման պայմանները,

-տեղանքի դիտարկման պայմանները,

-տեղանքի կրակավարման պայմանները,

-տեղանքի ինժեներական սարքավորման և ջրամատակարարման պայմանները:

Ռելիեֆը և տեղանքի առարկաները որոշակիորեն կարող են թուլացնել միջուկային և այլ տիպի պայթյունների ազդեցությունը, ապահովվել ամբողջ անձնակազմի ու տեխնիկայի պաշտպանությունը ոչնչացումից: Տեղանքի այդ հատկանիշները որոշում են նրա պաշտպանական հատկությունները: Դրանք են՝

-տեղանքի անցանելիությունը,

-տեղանքի պաշտպանական հատկությունները,

-տեղանիք քողարկման հատկությունները,

-տեղանքի կողմնորոշման պայմանները,

-տեղանքի դիտարկման պայմանները,

-տեղանքի կրակավարման պայմանները:



Նկ.1 Ռելիեֆի տիպային ձևեր

Ինժեներական արգելքների կառուցվածքը

Իրենց մեջ ներառում են՝

-ականապատ դաշտերը,

-ականների խումբը,

-արգելքների հանգույցները,

-փլվածքները,

-հակատանկային և հակահետևակային այլ խոչընդոտներ և այլն:

Արգելքների հիմքը հանդիսանում է ականապայթյունային արգելքները, որոնք տեղադրվում են ինժեներասակրավորային ստորաբաժանումների կողմից:

Տակտիկական քողարկում

Պաշտպանությունում իրականացվում է հակառակորդին ուժերի կենտրոնացման, մարտակարգի զորաշարվածքի առաջնագծի կառուցվածքի, կրակագծի (և այլն) ոչ իրական պատկերն ստանալու, մոլորեցնելու նպատակով: Հակառակորդը ունենալով ոչ ճշգրիտ տվյալներ հնարավոր է դառնում նվազեցնել նրա կողմից վարված կրակի էֆեկտիվությունը: Հակառակորդի կրակի էֆեկտիվության նվազեցման դեպքում կարողանում ենք պահպանել և խնայել թե անձնակազմը, թե սպառազինությունն ու

տեխնիկան: Զորքերի քողարկման լավ պայմաններ կան մասնատված տեղանքում: Ռելիեֆի գոգավոր մասերը, ձորակներն ու հեղեղակները քողարկման համար ստեղծում են նպաստավոր պայմաններ: Քողարկված զորաշարժի և թիկունքի հետ կապն իրականացնելու համար դրանք կարող են լինել հարմար և ծածուկ միջանցքներ: Տեղանքի քողարկման հատկությունները կախված են նաև տարվա սեզոնից և եղանակային պայմաններից: Այսպես, ամռանը լայնատերև անտառներն ապահովվում են ստորաբաժանումների համար հուսալի քողարկումը: Ձմռանն այդպիսի տեղանքում ձնածածկույթի ֆոնի վրա մարտական տեխնիկան լավ տեսանելի է: Տեղանքի քողարկման հատկությունները թույլ են տալիս սեփական օբյեկտները քողարկել հակառակորդի ինչպես տեսանելի դիտարկումից, այնպես էլ զանազան տեխնիկական միջոցներով կատարվող հետախուզությունից: Բացի այդ քողարկված դիրքերից հակառակորդին կարելի է հասցնել անսպասելի հարված: Տեղանքի դիտարկման պայմանները այն հատկությունն է, որը նպաստում է կամ խոչընդոտում հակառակորդի ուժերի մասին տեղեկություններ ստանալուն: Այն առաջին հերթին բնութագրվում է տեղանքի տեսանելիության աստիճանով, տեսադաշտի բաց կամ փակ լինելով: Վերջինս կախված է տեսադաշտի հեռավորություն ռելիեֆից, բուսականությունից, բնակավայրերի և մյուս օբյեկտների բնույթից: Տեսանելիությունը կախված է նաև օդերևույթաբանական պայմաններից և առաջին հերթին օդի խոնավության աստիճանից:

Դիտարկումից ստացած արդյունքները հրամանատարին օգնում են համակողմանիորեն գնահատել իրավիճակն ու կայացնել հիմնավորված որոշում:

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը պաշտպանությունում

Պաշտպանությունում ջոկը զբաղեցնում է մինչև 100մ ճակատով դիրք: Ունենալով կրակային միջոցների համար հիմնական և պահեստային դիրքեր, ջոկը կարող է հետ մղել հակառակորդի գերազանցվժղ ուժերի գրոհը: Ջոկի հրամանատարը պետք է զբաղեցնի այնպիսի դիրք, որտեղից ավելի հարմար կլինի ղեկավարել ջոկը, դիտարկել տեղանքի և հետևել դասակի հրամանատարի ազդանշաններին: Ջոկի մարտակարգում գնդացրորդը տեղավորվում է սովորաբար ջոկի հրամանատարի կողքին: Նռնականետորդի տեղը կախված է հակառակորդի տանկերի շարժման հավանական ուղղություններից: Ավագ հրաձիգի տեղը ջոկի հրամանատարի կողքին է մշտապես

պատրաստ փոխարինելու նրան՝ մարտում նրա մարտունակության կորստյան դեպքում: Պաշտպանելով դիրքը մինչև 100մ ճակատով ջոկը կարող է հետ մղել հակառակորդի ջանքերով ուժեղացված մոտոհետևակային դասակի գրոհը: Մոտոհրաձգային ջոկի կազմը և մարտական հնարավորությունները Մոտոհրաձգային ջոկը սկզբանական մարտական ստորաբաժանում է, սովորաբար ջոկը մտնում է մոտոհրաձգային, մոտոհետևակային, հետևակային, ականանետային, սակրային, կապի և այլ դասակների կազմի մեջ: Երեք ջոկը մեկ դասակ է: Հարձակման կամ պաշտպանության ժամանակ իրեն առաջադրված խնդիրը ջոկը կատարում է դասակի կազմում: Մոտոհրաձգային ջոկը լինում է հետևակի մարտական մեքենայով (ՀՄՄ) կամ զրահափոխադրիչով (ԶՓ), իսկ հրաձգային ջոկը ավտոմեքենայով: Մոտոհրաձգային ջոկի կազմը կարող է լինել 8-10 մարդ.

-հրամանատար,

-նշանառու օպերատոր,

-նռնականետորդ,

-նռնականետորդի օգնական,

-գնդացրորդ,

-մեխանիկ վարորդ,

-ավագ հրաձիգ,

-երեք հրաձիգներ:

Կրակային հզորություն

Մոտոհրաձգային ջոկի մարտակարգը հետիոտն հարձակվելիս զինվորների շղթա է: Զինվորների միջև տարածությունը 6-8մ է (8-12 քայլ), իսկ նռնականետորդի և օգնականի միջև 1-2մ: Զինվորների շղթայի ետևից շարժվում է հետևակի մարտական մեքենան կամ զրահափոխադրիչը,որը իր կրակով աջակցում է ջոկին: Ջոկը հարձակվում է միջև 50մ ճակատով: Դասակի ջոկերի միջև հեռավորությունը միջև 50մ է: Կառավարվող հակատանկային հրթիռային կոմպլեքսների միջև եղած հեռավորությունը ոչ պակաս 15մ:

Մինչև հարձակման սկսվելը վերադաս հրամանատարության կողմից նշվում են ելման դիրքերի տեղերը, ստորաբաժանումները ծածուկ զբաղեցնում են իրենց դիրքերը:

Ելման դիրքում մոտոհրաձգային ստորաբաժանման անձնակազմերը գտնվում են խրամատներում,իսկ հետևակի մարտական մեքենաները (ՀՄՄ) խրամատի մոտակայքի կրակային դիրքերում կամ ելման կետերի խորքում ստորաբաժանման մյուս մեքենաների հետ միասին: Զբաղեցնելով ելման դիրքերը ստորաբաժանումները պատրաստվում են հակառակորդի հավանական հարձակումների կասեցմանը: Ստանալով մարտական հրամանը հրամանատարը կազմակերպում է հարձակումը:

Զինվորի գործողությունները մարտի ժամանակ

Դիրքերում անձնակազմը տեղաբաշխվում է այնպես որ ճակատի և թևերի բոլոր մատույցները կարողանան պահել ազդեցիկ կրակի տակ,իսկ արգելափակոցները լավ դիտարկվեն և գնդակոծվեն: Ջոկը միշտ պետք է պատրաստ լինի կրակ վարել թէ գիշերը, թէ սահմանափակ տեսանելիության պայմաններում: Զինվորը գործում է ջոկի կազմում, ստանալով հրամանատարի մարտական առաջադրանքը նա պարզում է՝

-կողմնորոշիչները,

-հակառակորդի կազմը և դրությունը,

-հարձակման հնարավոր ուղղությունը և ժամանակը,

-դասակի, ջոկի և իր խնդիրը,կրակային դիրքերի սարքավորման հաջորդականությունը, դրանց փոփոխման կարգը, դասակի կենտրոնացված կրակի այն հատվածները որտեղ կրակ է բացելու ջոկը, ազդարարման, կառավարման և փոխգործակցության ազդանշանները, դրանով գործելու կարգը,

-պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը:

Ջոկը պաշտպանությունում սարքավորում է անհատական խրամատներ: Խրամատները լինում են պարկած, ծնկած կամ կանգնած դիրքերից կրակ վարելու համար: Ժամանակի առկայության դեպքում անհատական խրամատը խորացվում է մինչև 60սմ՝ ծնկած վիճակում կրակելու համար, ապա մինչև 110 սմ՝ կանգնած կրակելու համար:



Կանգնած դիրքից կրակելու խրամատ



Պառկած դիրքից կրակելու խրամատ
ա) տեսքը կողքից, բ) տեսքը վերևից

Խուսանավում և շրջանցում

Ստորաբաժանումները իրականացնելով իրականացնելով խուսանավում և շրջանցում կարող են հարվածներով և կրակով հակառակորդից խլել նախաձեռնությունը, կոտրել հակառակորդի մտահղացում և փոխված իրավիճակում վարել մարտը: Սա կարելի է իրականացնել արագ տեղաշարժով դեպի հակառակորդի մարտակարգի թիկունք, այդ թվում և օդով իրականացնել նաև հետ քաշում դեպի նոր բնագծեր և դիրքեր սեփական տարածքում: Խնդրի իրականացումը ըստ մտահղացման պետք է լինի պարզ թշնամու համար կատարվի արագ և ծածուկ: Համազորային մարտում առաջատար դերը պատկանում է մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումներին: Կախված իրավիճակներից նրանք կարող են գործել երթակարգով և մարտակարգով: Պաշտպանություն Մարտի տեսակ է, որի նպատակն է հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը խափանել կամ հետ մղել հարձակումը, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ, ստեղծելով բարենպաստ պայմաններ վճռական հարձակման անցնելու համար: Պաշտպանությունը կարող է լայն կիրառում ունենալ ոչ միայն հակառակորդի հարձակման ժամանակ

սկզբնաժամկետում այլ նաև պատերազմի ժամանակ, սակայն միայն պաշտպանությունով սեփական զորքերը հաղթանակ չեն կարող ունենալ:



Նկ.1 Ստորաբաժանման խուսանավումը մարտում



Նկ.2 Ստորաբաժանման խուսանավումը կրակի վարումով

Հարձակում

Հարձակումը մարտի հիմնական տեսակ է,այն վճռական նշանակություն ունի հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար:Միայն վճռական հարձակումով կարելի է հասնել հակառակորդի լրիվ ջախջախմանը:Սովորաբար հարձակումից առաջ իրականացվում է պլանավորված հրթիռահրետանային և օդուժի հզոր հարվածներ՝ ոչնչացնելով հակառակորդի պաշտպանության կարևոր օբյեկտը,կրակային կետերը և ապահովման կոմունիկացիաները: Ժամանակակից համազորային մարտի բնորոշիչներն են .

-գլխավոր հարվածի ուղղության ընտրում,

-թիրախների որոշում,

-հետախուզական միջոցների և տվյալների ներդրումու կիրառում,

-բարոյահոգեբանական վիճակի բարձրացում,

-ջանքերի ներդրում,

-մարտական գործողությունների դինկամիկ արագացում,

-օդային և ցամաքային համագործակցություն,

-ինժեներական ապահովում,

-միաժամանակյա հզոր կրակային ներգործություն,զորաշարվածքի ամբողջ խորությամբ,

-մարտական խնդրի կատարման նպատակով տարբեր բնույթի գործողությունների կիրառում,

-արագ անցում մի տիպից այլ տիպի գործողությունների կիրառմանը,

-ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների կիրառում,

-հանկարծակիության գործոն,

-բժշկական ապահովում:

Հարձակման ժամանակ յուրաքանչյուր զինվոր պետք է ցուցաբերի խիզախություն և համարձակություն: Հարձակումը պետք է լինի սրընթաց և անընդմեջ,որպեսզի հակառակորդը չկարողանա դիմադրություն կազմակերպել միջանկյալ բնագծերում: Ստանալով հրամանը զինվորը պարզում է՝

-կողմնորոշիչները,

-հակառակորդի կազմը,գործողությունների բնույթը,կրակային միջոցների տեղաբաշխումը,

-դասակի,ջոկի և իր խնդիր,իր տեղը շխթայում,ոչնչացման ենթակա նշանակետերը,

-այն տանկի համարը և տարբերանշանը,որին հետևելու է ջոկը,հրետանու,ականանետերի օգտագործման կարգը

-ՀՄՄ-ից իջնելու տեղը ընդացքից հարձակվելիս արգելքների հաղթահարելու կարգը,

-ազդարարման, կառավարման և փոխգործակցության ազդանշանները,դրանցով գործելու կարգը,

-հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:

Հարձակում քաղաքում

Սովորաբար քաղաքում դասակը հարձակում իրականացնելիս շարժվում է փողոցի երկու կողմով և նրա երկարությամբ, իսկ ջոկը շարժվում է փողոցի միայն աջ կամ ձախ կողմով: Փոխադարձ օգնությունը ցուցաբերվում է շենքերումկրակակետերի խոցման միջոցով: Կրակի վարումը իրականացվում է փողոցի հանդիպակած ուղղությամբ գտնվող շենքերի ուղղությամբ: Մոտոհրաձգային ստորաբաժանումները և նրանց տրամադրված

ականանետները և կրականետերը առաջին հերթին ոչնչացնում են ներքևի և նկուղային հարկերում դտնվող թշնամու կրակակետերը: Տանկերը ինչպես կանոն գործում են մոտոհրաձգային ստորաբաժանման շղթայում կամ վերջում, իրենց կրակով ոչնչացնելով հակառակորդի կրակակետերը, աջակցում գրոհող անձնակազմին: Հետևակի մարտական մեքենաները գործում են տանկերից հետո, մեկ թաքստոցից մյուսը, ցատկային եղանակով թաքցտոցից թաքցտոց տեղաշարժվելով, միաժամանակ կրակով ոչնչացնելով հակառակորդին, որը խոչընդոտում է անձնակազմի և տանկերի առաջխաղացմանը:

Քաղաքում հարձակումից առաջ հրամանատարը մանրամասն ուսումնասիրում է թշնամու պաշտպանության բնույթը, հատկապես նրա կրակի վարման բնույթը,թևերից կրակի վարման հնարավոր ուղղությունները և հնարավորությունները, օբյեկտին մոտենալու հնարավոր ուղիները և արգելափակոցների առկայությունը: Գրոհից առաջ տանկերի, զրահամեքենաների, ականանետերի կողմից իրականացվում է կրակի վարում, որով իրականացվում է հակառակորդի կրակակետերի, ամրաշինությունների, արրգելափակոցների ամբողջական ոչնչացում: Մոտոհրաձգային ստորաբաժանման կողմից մոտենալով գրոհվող օբյեկտին տանկերի և այլ փողային զենքերի կրակի ուղղությունը փոխվում է դեպի շենքերի կամ հարձակման օբյեկտի վերին հարկերը: Օգտվելով կրակի աջակցությունից, ծխային քողարկումից, գործելով արագ և խիզախ ստորաբաժանումը մուտք է գործում շինություն, որտեղ էլ իրականացնում է դիմադրություն ցուցաբերող հակառակորդի ոչնչացումը: Գրոհող անձնակազմին ինժեներական ստորաբաժանումը աջակցելու նպատակով իրականացնում է պատերի և միջնապատերի, հարկերի միջև անցումներ բացելով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնում ականազերծումներ: Գրավելով և հակառակորդի դիմադրություն ցուցաբերող անձնակազմի ոչնչացումից հետո ստորաբաժանումը անցնում է հաջորդ օբյեկտի գրոհին:

Հանդիպակած մարտ

Հանդիպակած մարտը հնարավոր է մարտական տարբեր իրավիճակներում՝

-երթի ընթացքում,

-պաշտպանությունում հակահարձակման անցնելիս,

-ինչպես նաև հարձակման զարգացման ընթացքում:

Նպատակը

-Հարձակվող հակառակորդի ջաղջախումը կարճ ժամկետում,

-նախաձեռնության խլում հակառակորդից և հետագա գործողությունների համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Բնորոշումը

-մարտական գործողությունների կտրուկ փոփոխություն և արագություն,

-կողմերի արագ մոտեցում,մարտի բռնվելով հընթացս,

-ժամանակի շահելու նպատակով լարված մարտ,

-նախաձեռնության խլում և պահում ստեղծելով կրակային առավելություն հակառակորդի նկատմամբ,

-հակառակորդի առկա մարտակարգում և թևերում ստեղծել նշանակալի բացվածքներ, որը թույլ կտա ազատ մանևրելով: Նշանակալի դեր ունի հակառակորդի կասեցումը մինչև մարտական զորաշարվածքի բացազատվելը կրակի բացումը և հարձակման անցնելը:

Հարձակում լեռներում

Լեռնային դժվարամատչելի տեղանքներում մոտոհրաձգային ստորաբայանումը կարող է գործել ինքնուրույն (որպես կանոն ջոկը դասակի կազմում), սովորաբար հետիոտն կազմով: Տանկային ստորաբաժանումները գործում են տանկերին մատչելի տեղանքներում: Տանկերը մոտոհրաձգային ստորաբաժանմանը աջակցում են կրակով: Դժվար անցանելի հատվածների հաղթահարումը իրականացվում է միայն մոտոհրաձգային ստորաբաժանման կողմից ոչնչացումից հետո: Լեռնային հատվածներում հարձակումից առաջ հրամանատարը սովորական հարցերից բացի պետք է.

-մանրակրկիտ ուսումնասիրի հակառակորդի կրակի վարման համակարգը լեռնային բոլոր հարկերում,

-ուշադրություն դարձնի թևերի ուղղությամբ կրակի վարման միջոցներին,

-դիտարկում իրականացնելով պատրաստ լինել ոչնչացնելու հակառակորդի դարանակետերը,

-ընտրել հարձակման և մանևրի համար անհրաժեշտ ուղիներ,

-կողմնորոշվել կրակային ինչպիսի միջոցներով և որտեղից է շահավետ խոցել հակառակորդին,

-հայտնաբերել հնարավոր փլուզումների, սողանքների, քարաթափերի հնարավոր առկայությունը և նրանց հաղթահարման կարգը:

Բարձրունքի գրոհի դեպքում անհրաժեշտ է հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի միաժամանակյա ոչնչացումը բարձրունքի բոլոր հարկերում: Առաջին հարկի գրոհի ժամանակ ստորաբաժանման մի մասը կրակի ուղղությունը վարում է հաջորդ հարկերի և նրա կրակային միջոցների ուղղությամբ, որոնք կրակում են թևերի ուղղությամբ: Զրահամեքենաները և տանկերը տեղաշարժվում են իրենց համար նպաստավոր վայրերում, որտեղից կկարողանան ստորաբաժանմանը աջակցել կրակով:

Եզրակացություններ,առաջարկություններ

Պայմանավորված ռազմագիտության ոլորտում, ինչպես նաև վերջին տասնամյակում (և 2020թ-ի 44 օրյա պատերազմի փորձը) տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման մոտեցումները, շարժվելով անհատական և խմբային պատրաստվածությունից: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը, ձևավորված հենքային որակները աստիճանաբար գործնական վարժանքներում կիրառելը: Կարևոր է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, որը չպետք է հակասի մանկավարժական գիտության սկզբունքներին՝

1. ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն
2. դիտողականություն և մատչելիություն
3. գիտելիքների յուրացում (հմտություն և կարողություն)
4. գործնական ուղվածություն
5. օբյեկտիվություն
6. սովորողների ակտիվություն (ուսուցման խթանում)
7. առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում:

Այս ամենի վերջնարդյունքի սկիզբը պետք է հանդիսանա ՆԶՊ ուսուցչի հմտությունը դասավանդման պրոցեսում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ.Օհանյան,Ս.Մարգարյան նախնական զինվորական պատրաստություն դասագիրք ԵՐԵՎԱՆ 2019.

2. В.Н Смирнов,Г.В. Рыбалкова Боевой устав сухопутных войск часть 2 Москва 2005

3. В.Н. Смирнов, Г.В. Рыбалко Боевой устав сухопутных иойск часть 3 Москва 2005

4. Ա.Ի.Իսահակյան Ռազմական տեղագրության խնդիրների լուծմանմեթոդիկա ՀՀ ԶՈՒԳՇ ՌԲ ԵՐԵՎԱՆ 2016

5. Գ.Ա.Մանուկյան Ռազմական տեղագրություն դասագիրք ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԲ ԵՐԵՎԱՆ 2008